Ռուսական ստեպը օժտուած հսկայ հաբբստութիւններով, բայց անցեալից զուրկ, անհաւասարակշիռ, կոյր, բնազդական կեանքի դիշերի մէջ դեգերող, արդի քաղաքակրթութեան հետ հաղորդուելու համար արիւնալի ճամբայ է որոնում: Իր պատմական բախտը կապուած է Ուրալի ոսկիներին եւ Դոնի ածուխին: Ռուսական ժողովուրդները, չնայած արեւելեան մտքի չտեմարանից առած մի քանի արժէքներին, օրգանապէս անկարող են մեծ մշակոյթ ստեղծել: Եւ առաքեալ պէտք չէ լինել նախատեսելու համար երկրի ապագայ տեխնիկական զարգացումը: Այս օրուան համայնավարութիւնը ուրիշ նպատակ չունի, եթէ ոչ լայնօրէն ճանապարհ բանալ արեւմտեան դրամատիրական քաղաքակրթութեան եւ երկրորդ Ամերիկայի վերածել լայնատարած պետութիւնը:

Ռուսաստանը մեռնող քաղաքակրթութիւնների օրօրանը եղած է: Այնտեղ վերջին շունչն է տուել Բիւզանդիոնը, այնտեղ կը մեռնի նաեւ արեւմտեան քաղաքակրթութիւնը:

Վկայ է սովետական ռեժիմը:

* * *

Արդ, հարց է ծագում, մենք հայերս, կանգնած երկու այս հսկայ աշխարհների՝ մշակոյթային Արեւելքի եւ քաղաքակրթական Արեւմուտքի միջեւ՝ ի՞նչ կերպով պիտի կարողանանք իրագործել մեր պատմական ճակատագիրը:

Պիտի կառչե՞նք մեռնող եւրոպական քաղաքակրթութեան, թէ՞ առաջին պլանի վրայ կանգնած՝ արեւելեան մտքի նոր ճառագայթու մի եւ նոր ստեղծագործական թափի հետ, պիտի հանդիսանանք ներուժ մշակոյթային կենտրոն: Պիտի կրկնե՞նք մեր նախնիքների սխալը, թէ՞ գիտակցօրէն, հերոսաբար, պիտի կարողանանք՝ հակառակ մեզ շրջապատող անողոք պայմաններին՝ դրսեւորել մեր ազգային եսը, ընդունել պատմութիւնից մեզ վիճակուած խորհրդաւոր, հակատրամաբանական ու ճակատագրական դերը:

Քաջութիւնը ունենանք խորհելու եւ նաեւ քաջութիւնը ունենանք համարձակելու:

Մեծ մշակոյթները առաջ են եկել միշտ էլ հակառակ «առարկայական», հակառակ տընտեսական եւ քաղաքական պայմաններին: Մշակոյթը, եթէ ուզում էք, հոգեկան արկածախնդրութիւն է, վսեմ մի խենթութիւն, որով տիեզերքը գալիս գտնում է իր իմաստը: Մշակոյթը պահանջում է մեծ ճիգ, հաւատք եւ զոհաբերութիւն՝ առաքինութիւններ, որով հայ ժողովուրդը լիովին օժտուած է: Այլապէս կարելի չէ հասկանալ նրա ամբողջ պատմութիւնը, նրա դարաւոր մարտիրոսութիւնը, նրա թափած արիւնի համաշխարհային իմաստը:

Եթէ մենք, հայերս, կուրօրէն ենթարկուինք ներկայ քաղաքական պայմաններին, մեզ վիճակուած է, ռուսական ապագայ հրսկայ տնտեսական կազմակերպութեան մէջ, չնչին արտադրողի դիմազուրկ եւ աղքատիկ վիճակ:

Երբ այս օրուան հայ համայնավարները՝ չնայած ժամանակաւոր եւ երեւութական զիջումներին՝ աշխատում են ազգային եւ կրօնական զգացումը միանգամայն քանդել, հայ գաղթականները ցրել Ռուսաստանում, եւ երկիրը վերածել տնտեսական միաւորի, նրանք գործում են տրամաբանօրէն եւ հաւատարիմ իրենց իդէալին: Նրանք ուրանում են մշակոյթային արժէքները եւ իբրեւ բուրժուական, դրամատիրական մտքի ծայրայեղ ներկայացուցիչներ, ձգտում են բոլոր տարրերը ձուլել որոշ արդիւնաբերական նպատակների համար: Եւ պէտք չէ զարմանալ, երբ հայ վաճառականները եւ արտասահմանեան հարուստները իրենց ծարաւ աչքերը յառում են համակրանքով դէպի համայնավարութիւնը: Գայլը ճանաչում է իր ճագին: Այրուող տան փլատակների վրայ նրանք տեսնում են ապագայ կարելիութիւններ: Նոյն ցեղի եւ նոյն մտայնութեան մարդիկ՝ նրանք գիտեն, որ իրենց կըռիւը ժամանակաւոր է. թիւրիմացութիւնը կ'անցնի եւ ձեռք ձեռքի տուած նրանք միասին կ'աշխատին: Նրանց աշխարհայեացքը նոյն տարրերից է կազմուած. նիւթապաշտ են, ուրանում են «վերացականը», հոգեկանը, ուրանում են մշակոյթը:

Սակայն, բաւական է թեթեւ հայեացք նետել մեր քարտէսի վրայ, ըմբռնելու համար, որ մեր երկիրը մեծ արդիւնաբերական ապա-

Հայ մատենագրության թուանշանային գրադարան